49. ՏՎԸՐԱԾԵՆ ՏՂԱՆ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Ըտրան իլալ ա մին մադար տղա, մին էլ մին մադար ախճիգյ։

Ժուվ ա անց կենըմ, ժամանակ ա անց կենըմ, էտ թաքավերեն տղան ետ ա տրեռնըմ ուրան մորը, թա. — Ա՛ մար, պա հես ա տասնոթ-քսան տրեկան տղա յըմ տրեռալ, հալա իմ հոր կայքը տեսալ չը՞մ, մին պլատեն պլենիքյը լոխ ինձ տո, քյնամ տեսնամ՝ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։

Մարն ասում ա. — Հի՞նչ կա վե՞ր, կա պլենիքյը, քյնա, քառասուն տոռնը կա ուրուր հետա մին-մին պեց, տես քու հոր հիշքան կայք օնե։

Տղան յոր ա օնում պլենիքյը, մին-մին տոնները պեց անում, ամմա լուխճան վերչին տռանը պլենին մարը տված չի ինում։

Տղան մնամ ա զըրմացած, թա. — Ըստեղ հի՞նչ կա, վեր պլենին տվալ չի իմար, հալբաթ մին խալվաթ պեն կա՞։

Քյինամ ա մորը կոշտը, զըրմացած, թա.— Ա՛ մար, ասե տեսնամ, թա հինչո՞ւ հետե չըս վերչին տռանը պլենին տվա՞լ։

Մարը խըրըվխարավ ա կյամ. թա.— Վերթի չան, քյըզանա հի՞նչ կյեղիմ, քու հար քյնալիս ասալ ա, են տանը պլենին վեչ մինին տաս վուչ, յըես էլ չըմ գյուդում, թա ընդեղ հի՞նչ կա։

Տղան պլենին յոր ա օնում, ուրխացած վազ տամ, քյընամ պենըմ։ Նի յա մննում մաչ ղոլը, հի՞նչ տրեսնըմ, ամա՞ն-ամա՞ն։

Մին հո̈ւրըփա̈րի ըխճըկա նկար պատան տված տեսնալըն ըբա̈ստ ուրա̈նա̈ն քյնամ ա, օշը տանում, վեր ընդնում։

Շատ ա կենըմ, խըրեգյ ա կենըմ, օշը կլո̈խըն ա կյամ, եր ա կենըմ նկարը պատան պուկըմ, պտատըմ, շուրումը տինում, տո̈ւս կյամ, մորը ծեն տամ, թա. — Ա՛ մա̈ր, ճելլի պադրաստոթուն տես, հրամման տո ծիս թամքին, էքուծ քըշըրհանա քյըննա̈կան ըմ ըռնու կյինավ էլ ինի ախճիգյը քթենամ, պիրիմ։

Մարն ասում ա.— Վերթի շան, վեր գյիդա̈ս, թա էտ ըխճկանը դա̈րդա̈ն հիշքան թաքավերոթուննի յըն փչացալ, սկի քյընա̈լ շըս նըհախ տեղան։ Քու հա̈ր էլ ա քյեցալ, մհենգյ հո՞ր ա, հետնը թեփուտը ըրվում չի՞։ Օղում ըս տու վէլ քու հոր մնան կորչի՞ս։ Չէ՛, բա՛լա շան, քյինում մեր, յըես քյըեղհետե մին լա̈վ ախճիգյ կօղիմ։

— Ա՛ մա̈ր, իմ ասածըս ասած ա, վեր մըեռնիմ էլ, բիդի քյինա̈մ, պիրիմ։

Մարը տեսնըմ ա, վեր տղան խոսկեն պենդ ա վեննը կացած, պադրաստոթուն ա տեսնում, պըծնում, հղե տինո̈ւմ։

Էտ տղան շատ ա քյինա̈մ, խըրեդյ ա քյինա̈մ, մին շենըմ մին սպառավ կնդա տան ղոնաղ ա ընգնում։

Պառավը հըրցնում ա, թա. — Բալա շան, իտի մինա̈կ ըշտե՞ղ ըս քյինա̈մ։

Տղան մին-մին դա̈րդերը նաղլ ա անըմ։

Պառավն ասըմ ա. — Բա՛լա, մին ծեռքը ծափ չի տալ, տու էլ մին չըլըմսըզ տղա։

Տղան ասըմ ա. — Նանի՛ շան, պա հի՞նչ անիմ, լա̈վ, մին թա̈հրը չիկա՞՞։

Պառավը իստի մին ջողար ա տամ, ասըմ. — Բալա ջան, իմ տղաս վեր քյըեղ նհետ ինի, անպայման կործերըտ աչ կինի, հաճող կինի։

— Պա շտե՞ղ ա տղատ, էտ լհա̈ մին լա̈վ պեն ա, հնգյեր չօնիմ, թող ինձ նհետ կյա։

— Բա՛լա ջան, պա շտե՞ղ ա, վեր ասիմ կյա, ըստրանա մին քանի օր առաչ մեր շենին քյոխվան մին քյա̈սիբ մարթու փռնում ա, շըլլաղավը թակըմ, թա էս սըհաթես խարշըտ տոր։ Տղաս ըսկանում ա քյուխվեն ըրարմունքը, ինքյն էլ իտի փիս պեները սիրըմ չի, հա̈վսա̈լա̈ չանըմ, եր ա կենըմ, քյնո̈ւմ ինքն էլ քյուխվեն փռնըմ, քու օ̈ղած մին լա̈վ տըմբըղըմ, ծեռքը նշանց տամ, հիշքան ասիս։ Ասում ըմ, ա՛յ բալա՛մ, կործ չօնի՞ս, էլա ինձ եշըմ չի։ Վե՛րթի ջան, ըստեղ ըն ասալ, թա. «Հա̈վսա̈լա̈ն գյանք ա»։ Հա̈վսա̈լա̈ չըրավ,

մհենգյ պրիստավը փռնալ ա, ծակը կոխալ։ Վերթի ջան, հալա՞ ջահիլ ըս, ինձ թա՞ անջուկ անիս, վնաս չըս անել։ Հավսա՞լան գյանք ա, հավսա՞լա ըրա, տեսնանք ըզադըմ ըն տղես, մինակ էն կըկարե դարդիտ դարման անե։

— Նա՛նե ջան, տղետ ըղադելը իմ պարթկըս։

— Պա հո՞ւնց կըղադիս, բալա ջան, հոր ա՞, թա իտի մին պեն անի՞ս։

— Կանիմ, կանիմ, արխային կաց, նանե ջան, յըես էս երգյիրին թաքավերեն տղան ըմ, հենց էս սհաթես յըես պրիստավեն հրամման կտամ, պեց կը թողե ջան նըման։

Պառավը ուրխընելան նհետ սկսից ըրտասունք թափելը։

— Լաց մի նիլ, նա՛նե, կըղադիմ, ամմա ասե տեսնամ, թա տղատ հի՞նչ կործ օնե քյուխվեն նհետ, վեր թակալ ա։

— Բալա ջան, աթալարը ասալ ա. «էծը էծին հետե լա՞վ ա, քանց մին սուրու վեխճարը»։ Պա վեր տըվըրածեն տղան ուրա՞ն նման քյասիբ մարթին հրեյին հըսնե վուչ, հո՞ւ բիդի հըսնե՞։ Ընտրա հա՞ըը տվարած ա իլա՞լ, ղորմի ընդրան, հա՞լա ուրա՞ն գյանքըմը մարթու փիսոթուն չըրա՞լ, լվութունա կըմա՞ն, ուրա՞ն տղեն էլ իտի յա տա՞ս տվալ, թա՞ քյասիբներեն հրեյին միշտ կհըսնիս։

Էս խոսկեն նհետ խեղճ պառավըն սկսըմ ա լա՞ց ինիլը։

— Լա՞ց մի ինիլ, նա՛նե, մարթիտ թողած խոսկերքը տղատ կըդարալ ա, ափարիմ նա, յըես ընդրան էս սհաթըս կըքյինա՞մ ըղադիմ, ճակատը պաչիմ։

Թաքավերեն տղան քյինա՞մ ա պրիստավեն, քյուխվեն փըռնըմ, կպոտըմ, քցըմ ծակը, պռավեն տղեն էլ ըզադըմ։ Տվըրածեն տղան ընդնում ա ուրա՞ն ըզադող տղեն կա՞լավը, պըչպըչորըմ։

Կյամ ըն տոն։ Թաքավերեն տղան դա՞րդերը նաղլ ա անըմ։

Էքյսը քըշըրհանա տվըրածեն տղան մըն էլ թաքավերեն տղան նստըմ ըն ծիյենը, հղե ինըմ։

Շատ ըն քյինա՞մ, խրեգյ ըն քյինա՞մ, ըռըշնեն էրկու հղե յա կյամ, մինը կարճ կածան, ամմա ծմրկներեն մաչավը։ Էտ կծանըմը թուփ տեռած ըն ինըմ ըշխարքես մըրշեմնեն։ Էն մին հղեն էլ ինում ա էրկան, լեն, տասը օրվա հղե։ Ըստեղ տվըրածեն տղան օղում ա թաքավերեն տղեն քշըռելի, փորցելի հետե մին հարց տա։

Ասըմ ա. — Ախպե՛ր, ասե՛ տեսնամ, վե՞ր հղրցավ քյինանք, վեր էս կըծանա՞վը քյինանք, մին օրըմը տեղ կհասնինքյ, ամմա էս հղեն սաղ միրշեմն ա։ Էն մին հըղեն լեն ա, թա՞մուզ, ամմա էրկան, տասը օրվա հղե յա։

Թաքավերեն տղան ասում ա. — Լեն հրղրցավը քյինանք։

— Խե՞, եք էս մոտե կծանավը մին օրըմը տեղ հրսնինք։

— Չէ, ախպերրս, պա էն մըրչեմնեն էլ ըն սունչ-կենթանի, նահանց էլ ա աստուծ ստեղծալ, վեր ապրին, վեր ինդի քյինանք ծիյանոցը վրններեն տակեն մըլյոնավեր մըրչեմնը կըստակեն, լավ ա էրկան հրղրցավը քյինանք։

Տվրրածեն տղան տեսնալավ, վեր դուզ ա ասում, վեր ընդրա խելքը թամամ ա, ծովրմ ըն լեն հղեն, հղե ընգնում։

Մին խիլլա քյեցած, բուրդան մին սաս ըն սկանում. «Տվրրածեն տղա, արվրրածեն տղա»։

Չորս ունդյունին եշում ըն, պեն չի ըրվամ։ Էտ վախտը մին թվավուր միրչեմնը տվրրածեն տղեն կուռնեն յրա վեննը կացած ա ինում, լուղու յա օնում, սկսում խոսելը։

Ասում ա. — Ցրես մին թաքավեր միրչեմն ըմ, եկալ ըմ ծրեզ մին լվոթուն անիմ, վեր տուք մրեզ խնայալ ըք, ծիակոխ չըք ըրալ. թեաս մինը պուկեցիք, նեղ տեղ ընգած տեղը ծրեզ հարկավեր կկյա։

Տրվրրածեն տղան ասում ա.— Հալբաթ դուզ ըս ասում, պուք տամ, հարկավեր կրկյա։— Պուկում ա, պըրծընում, հղեն շարունակում։

Շատ ըն քյինամ, խրեդյ ըն քյինամ, եշում ըն տեսնում մին մեծ ղոչ, ժինջիլը պուզերան կապա՞ծ, ծառան կախ տված։ Տվրրածեն տղան ծիքյ ա տամ, ժինջիլը կըտրում, վխճարեն ըղադրում, վեխճարըն ըստուծանա լուղու յա առնում, խոսում, ասում. — Վեր ինձ էս նեղ տեղան ըղադալ ըք, մղերաս էրկունը պուք տրվեք, յեր կալեքյ, նեղ տեղ ընգած տեղը մաղը մաղեն կըքրսիքյ, յրես ծեր հրեյին հրսնրլական ըմ։

Էրկու մաղ ըն պուկում, վեխճարը թողում ըտեղ, հղեն շարունակում։ Շատ ըն քյինամ, խրեդյ ըն քյինամ, տեսնում ըն մին պեցուր թումբու կըլիսե էրկու մեծ ըրկաթե դըրբըզա, մին մեծ քյիլիդավ քըլլած։

Տվրրածեն տղան ասում ա. — Ա՛խպեր, մին տու ըստեղ ծիենը պահե, քյինամ տեսնամ մին էն հի՞նչ դըրբըզա յա էն թումբումը։

Վերչը քյինամ ա տեսնում դուզ վեր դըրբըզա յա, ամմա վեչ մին պեն չի ըրվամ։ Ծիքյ ա տամ, պուկում, մհենգյ էլ թուլ անում, քցում քեռծեն տակը։ Էնքան ծանդրը ա ինում, վեր տափան նհետ աշխարքըս տուրուր ա կյամ։

Մին քանի մնուտանը ետը էտ դըրբըզեն տական էնքան սադանեքյ ըն տուս կյամ, վեր ընդեղեքյ լըսնըվում ա։ Սադանեքյը ուրխացած ընդնում ըն տվրրածեն տղեն վրններըն տակը, սկսում

լուզ տալը։ Լվթունեն տեղը սադանեքյը էրկու մաղ ըն տամ, ասըմ. — Նեղ տեղ ընգած տեղը ուրուր կըքըսիքյ, մունք կյըլական ընք քյոմաձյ անիքյ։

Տվըրածեն տղան հրցընըմ ա, ասըմ. — Ծրեզ հո՞ւ վա քըցալ էտ տուրմանն։

Ասըմ ըն. — Կափրիյել հրեշտակը։

Տվըրածեն տղան մաղերը յոր ա օնըմ, կյամ ախպորը կոշտը, նստըմ ըն ծիենը, հղե ընգնըմ։

Մին ծմակավ քյընալիս տեսնըմ ըն իրեք հղե, մին պառավ մարթ հղըցումը նստած, չուրուխը պըրանին։

Տվըրածեն տղան ասում ա. — Պարյօր քյըեզ հլիվեր, նստալ ըս ըստեղ հի՞նչ անիս։

— Աստուծու պարին, պարավ եկեքյ, ըստի ըշտեղ ը՞ք քյընամ։

Ծիանցան վեր ըն կյամ, հլիվերեն քշտին նըստըմ, ուրանց դարդերը նաղլ անըմ։

Հլիվերը էրգան անշուկ ա օնըմ, թառանչ քաշըմ, ասըմ. — Հե՞յ... բալալա՞ր, տրժեր տեղեր ա, ամալ կյալի պեն չի տա՞։ Էտ ախճիգյը հեն ա մին քերծու պտկե շինած պլատըմ։ Պալատըն էլ տուսի ղոլան հասար քաշած, պլատան մին վերստ քաշ, ծորումը մին օբա կա, օրեն մաչին մին տոն կա, վեր պենաս, նրանա ետը վրեղեն տակեն մին պալատ ա ըրվըլական, քառասուն տունանե։ Էտ պլատումը օխտը օշափ ա իննական, ամմեն մինը օխտը կլխանե։ Էտ ուշուփնեն էտ ծեր ասած ըխճրկանը ախպերքյն ըն։ Տուք պիտի քյինաքյ էս մաչի հըղըցավը։ Էտ հղեն թուշ տրննական ա ընդեղ։ Ուշուփնեն ծրեզ հարցեր ըն տրլական, վեր կարիքյ պադասխանիքյ, ախճիգյը ծերն ա, վեր կարիք վուչ, ծեր ոլումն ա։

Տղերքյը շումրակալ ըն ինում, մաչի հղեն ընգնըմ։

Քյինամ ըն քյինամ, հսնըմ ըն հրլուվերեն ասած օրեն կոշտը։

Տվըրածեն տղան ախպորն ասըմ ա. — Ծիենը ըստեղ ըրծ-ցըրու, մին յրես պըցրանամ, նի մրննիմ էտ օբան, տեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։— Տի էլ անըմ ըն։

Քյինամ ա նի մրննըմ օբան, տեսնըմ օխտը օշափ նստած մին ղղղանու կոխկե, մրես ըն իփըմ։ Էտ ղրղղանը էնքան մեծ ա ինում, վեր ըշխարհքումըս հիշքան կենթանի կա, ամմեն մինան տասը դանա մաչին ա ինում։

Կուճուր ախպերը ետ ա տրեռնըմ, մեծ ախպորը ասըմ. — Ախ-պեր, էս ղղղանըմը ամմեն կենթանուց կա, ամմա ինսան չիկա,

էս լհա ինքը-ինքը, ուրան վրեննավը եկալ ա, փռնինք, քցինք ղզղանը, իփինք։

Էս խոսկը տվըրածեն տղեն քյեփեն շատ ա նի կյամ։ Կզնըված ասըմ ա. — Դյիդվալ չի, թա հո՞ւ ղզղանը կընգնե։ Դե վեր ծեր օժեն յրան էտքան դյուվամիշ-դյորմամիշ ըլած ըք, եր կացեք, տեսնամ կըկարիք ծեր ղզղանը վեր տընիք տափեն։

Ուշուփնեն եր ըն կենըմ ամեգը մին տեղա փռնըմ, թա վեր օնին, կարըմ չըն։ Տվըրածեն տղան մինակ յոր ա օնըմ, հունց տափեն կյամ, վեր աշխարքըս տուրուր ա կյամ։ Թաքավերեն տղան հենա ինըմ ննշալիս, վեր տափը տուրուր ա կյամ, իրեսեն յրա վեր ա ընդյնըմ, քեթը ըռնըմ ա։

Ուշուփնեն մնամ ըն զրմացած, թա տրան հիշքան օժ օնե, վեր մինակ եր կալալ տափեն տրավ։ Տվըրածեն տղան տուս ա կյամ, ծեն տամ ախպորը, վեր ծիենը կապե տռնան, ինքը կյա օբան։

Նի յրն մընընըմ օբան, մհենգյ տվըրածեն տղան ուշուփներեն ասըմ ա. — Մունք իստի-իստի պենու հետե յրնք եկալ, եկալ ընք ծեր քուրը տանինք։

Ուշուփնեն տրեսնըմ ըն, վեր տա զոռի ջանավար տղա յա՞, խուտանըմ ըն վեր տան, ամմա բեդմա ուրանց տված հրցերեն կարին ջողար տան։

Առաչի դոնումը ասըմ ըն. — Քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ ընք խառնրելու, վեր կարիք ճոկիքյ, ախճիգը ծերն ա։

Խառնըմ ըն, պրծընըմ, ասըմ. — Միչև ուրուգյու բիդի ճոկիքյ, թա չէ ծեր ելումըն ա։

Ուրանք քյինամ ըն վրերսի։ Տվըրածեն տղան տես ա մտածըմ, տեն ա մտածըմ, բուրդան մենն ա ընգնըմ սաղանեն մազերը։ Ցոր ա օնըմ, մազը մաղեն քսըմ, ըշխարքես սաղանեքյը կյամ ըն, յրա տեռնըմ, ճոկըմ, մին մնուտըմը, մին էլ կորչըմ։

Ուշուփնեն կյամ ըն, մնամ զրմացած։

Երկունշի հարցը էն ա ինըմ, վեր ասըմ ըն. — Մհենգյ էլ քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ, քառասունն էլ կյորե խառնինքյ, բիդի ճոկիքյ։

Տամ ըն ուրանց, էլհա ուրանք քյինամ վրերսի։ Էտ դոնումն էլ տուս ըն օնըմ մըրչեմներեն թևերը, թևը-թևեն քսըմ, ըշխարքես մըրչեմնին հվաքվըմ ըն ըտեղ, մին ըշկըճրպումը ճոկում ըն, ճոկ-ճոկ, պրծընըմ, ուրանք կորչըմ։ Ուշափնեն կյամ ըն, տրեսնըմ ճոկած, հազրը։

Իրեքինշի հարցը տամ ըն, ասըմ. — Դե վեր իտի օժավ ը՞ս, մեր կուճուր ախպորը նհետ բիդի ղոչի տաս։

Սա վերջին հարցըն ա, վեր կըդարիս, եխնած ըս։ Տվըրածեն տղան մտածում ա, հի՞նչ անե, ինքյը հո՞ւնց կը կարե, մին կլխավ օխտը կըլխանե օշափեն եխնի։

Մեննն ա ընգնըմ վըեխճարեն մազերը։

Ասըմ ա. — Ցրես կարալ չըմ ծեր կուճուր ախպորը նհետ ղոչի տամ, ամմա իմ կուճուր ախպերը կըկարե։

Մազը-մազեն ա քսըմ, էն վըեխճարը կյամ ա, սկսըմ ըն կըռվելը։ Վըեխճարը քըմըկ-քամակ քյինա՜մ ա, մհենգյ էլ վազ տալավ կյամ, հունց պուզերավ թխըմ, ուշափեն օխտը կլոխը նի յա մննըմ փորը, մեռնըմ ա։

Եխնըված ուշուփնեն ասըմ ըն.—Մեր քուրը հեն ա էն խութին պտկե պլատըմը, ընդեղան միչև ըստեղ գյըբա՜վ կարմունջ բիդի շինիքյ էտ կրմունշավը պիրիքյ։

Ախպերքը մընում ըն մըտրծելիս, թա հի՞նչ անին, վեր գյըբա՜վ կարմունշ շինին։

Վըեխճարըն ասըմ ա. — Ցրես կը կարիմ։

Մազը մազեն ա քսըմ, քսան վըեխճար ըն կյամ։ Վըխճըրնեն մըըթոտըմ ըն, մհենգյ էլ ամմեն վըխճարեն աչի քուղը յոր ըն օնըմ, թող անըմ քցըմ հորը, մնացածը տամ ուշուփներեն, ուրա՜նք կյամ, քոն ինըմ։

Շատ ըն քոն ինըմ, թա խրեգյ, եր ըն կենըմ, տրեսնըմ մին մեծ ղուզղուն ուրա՜նց շոք ըրած։ Հըրցընըմ ըն, թա. — Հինչո՞ւ հետե յրս մըեզ շոք անըմ։

Ասըմ ա. — Վեր տուք մեր սոված ղուզղուններեն սովա ըզադալ ըք, հինչ պահանշ օնիքյ, ինձ ըսեցեքյ, յրես մին ըշկրճըպումը կըկագարիմ։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Վեչ մին պեն հարկավեր չի, մինա՜կ թա կարիքյ էն պլատան միչև ուշուփներեն օբան մին գյըբե կարմունշ շինիքյ...

Ղուզղուներեն մեծը ասըմ ա. — Իմ աշկես յըրա, միչև էքյուծ քըշրհանա պադրաստ կըտեսնաս։

Ղուզղունը ղուզղուններեն թաքավերը ինիլա՜վ հրամմայըմ ա ըշխարհքես ղուզղուններերեն, վեր հրվաքվին, քյինա՜ն փլան թաքավերեն դյիբենեն պիրին։

Քյինա՜մ ըն պուրում, թաքավեր ղուզղունը կարմունշը շինըմ ա, պըրծընըմ, կյամ տվըրածեն տղեն կոշտը, ասըմ. — Վեր քյինա՜ս,

էն ախճիգյը քո̈ն իլա̈ծ ա̈ իննա̈կան։ Պոլան մին տախտակ կըպուկխս, կյողլ կենաս։ Նա̈զիր-վա̈ղիրը խորա̈գյնի յըն պըրլա̈կան ըխճըրկանր հետե։ Տո̈ւս կըկյաս օտխս, ըմընեքյը թողիս եխտուտ, նորու նի մըննիս տեղըտ։ Վեր ասե՝ հո՞ւ վեր վերե յըս, տո̈ւս եք, քունն ըմ, տո̈ւս չիկյաս։ Հիշքան վեր ո̈ւրթումնը օտե, էլա տո̈ւս չի կյաս, ամմա վեր ախտորցը անավ ո̈ւրթում օտե, տո̈ւս կըկյաս։

Տվըրածեն տղան գյիրին կըմունշավը քյինա̈մ ա, նի մննում ըխճըրկանը տոնը, հունց ղուզղունն ասալ ա, ինգի էլ անըմ ա։

Մին էրկու հետ Նա̈զիր-վա̈ղիրը խորագյ ըն պո̈ւրո̈ւմ, տո̈ւս ա կյամ օտըմ, նի մըննըմ պոլեն տակը։ Առաչ ախճիգյը կզնըվըմ ա Նա̈զիր-վա̈ղիրեն յըրա, թա խե՞ յըն իտի անըմ։ Վերչը կլո̈խ ա ընդնըմ, վեր ստեղ մարթ կա, հիշքան ո̈ւրթում ա օտըմ, տո̈ւս չի կյամ, ամմա վեր ախպորցը ընըմավը ո̈ւրթո̈ւմ ա օտըմ, տո̈ւս ա կյամ։ Ախճիգյը ասըմ ա. — Վեր կրեցալ ըս կյաս ըստեղ, յըես քունն ըմ։

Տղան ասըմ ա. — Յըես եկալ ըմ քյըեզ տանիմ իմ ախպոր հետե։

Ծուխտեքան տո̈ւս ըն կյամ, գյիբին կըմունշավը քյինամ ուշուփներեն պալատը։

Ուշուփնեն ասըմ ըն. — Հալալ ինի ծըեզ, մեր տված հըրցերեն վեչ մին աշառ-րաշառ կըրեցալ չի կըղարե, տուք կըգարալ ըք։ Մունքյ քյինա̈նք վըերս անինքյ, պիրինքյ, ուրխոթուն անինքյ։

Թաքավերեն տղան մնըմ ա ըխճըրկանը քշտին։ Օշափնեն նան տվըրածեն տղան քյինամ ըն վըերսե։ Թաքավերեն տղան պլենիքյը յոր ա օնըմ, տըռները մին-մին պենըմ, քառասունինչի ութաղըմը եշըմ ա, տեսնըմ մին մեծ, օխտը կլխանե օշափ ժինջիլավ կպոտած, քշտեն մին լա̈գյա̈ն ճո̈ւր տրած, կարըմ չի խմե։ Էտ օշափն էլ ա էտ ըխճըրկանը հետե եկած իլա̈լ, ամմա հըրցերեն կրեցալ չի շողաբ տա, փըռնալ ըն, կպոտալ։

Օշափը թաքավերեն տղեն ասըմ ա. — Ա՛յ տղա, էտ ճո̈ւրը մուտուցրու մին թիքյա խմիմ, ծարավ մըեռնըմ ըմ։

Ճո̈ւրը տնում ա ըռըշին, խմելըն ըբա̈ստ օժը կյամ ա, հը՛ յա անըմ, ժինջիլնեն կտորըմ, տո̈ւս կյամ, ախճիգյը յոր օնըմ, փախչըմ, կորչըմ։ Թաքավերեն տղան ո̈ւրա̈նան քյինամ ա, վեր ընգնըմ։

Վերըստեղան կյամ ըն, տըեսնըմ տղեն օշը տարած, օշափն էլ, ախճիգյըն էլ կան վուչ։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Տուք ըտեղ կացեքյ, յըես քյինա̈մ, տըեսնամ հի՞նչ ըմ անըմ։

Նստում ա ծին, հղե ինո̈ւմ։ Խիլլա̈ քյընո̈ւմ ա, տըեսնըմ մին

մարթ համ վար ա անում, համ էլ ճումերը յոր օնում, օտում, համ էլ ասում. — Վա՜յ, վա՜յ, ամա՜ն սոված մեռե։

Տվրրածեն տղան ասում ա. — Ըստի-ստի օշափ ը՞ս տեսալ։

Ասում ա. — Մին պատառ վախտ ար, վեր մին ղաշանգյ ախճիգյ ծեռքեն անց կացավ։

Տվրրածեն տղան ասում ա.— Մին չինիքյ, էրկու ինիքյ, եք քյինանք։

Շատ ըն քյընամ, թա խրեգյ, պտահում ըն մին էրկան մարթու կյետավը շրքրռած, մին վեննը կյետեն էս ընգյունին, մինն էլ էն մին ինգյունին, կռանում ա, ճուր խմում, համ էլ թա. — Վա՜յ, ծարավ եմ ...

Հրցընում ըն, թա ըստի-ըստի մարթ չի տեսա՜լ։

Ասում ա. — Մին պատառ վախտ առաչ քյինաց մին ախճեգյ ծեռքեն։

Տվրրածեն տղան ասում ա. — էրկու չինինքյ, իրեք ինիքյ, քյինանք։

Իրեք հոքավ քյինամ ըն, հրսնում համան էն քաղաքը՝ վերդեղ վեր օշափրն ա։ Եշում ըն, տրեսնում, էն հրրսանեքյ ա անում, հալա օխտը օր, օխտը քշեր բիդի հրսանեքյ անե։

Քյինամ ըն, թա. — Մրեղ ղոնաղ չը՞ք ընթունիլ։

Ասում ըն. — Խե՜ չընք ընթունիլ։

էն ճումը օտող մարթը հրրսընքեն հացրն ա լոխ սրփում, օտում, ճուր խմող մարթն էլ կյինին։

Օշափեն դուլուղ ըն անում, ասում. — Հացը, կյինին հերիք չի ընանական, պա հո՞ւնց ըք անում։

Օշափրն ասում ա. — Տուք հրսանեքյը ըրեքյ, յրես քյինամ մին օխտը տոննա հաց պիրիմ հրեվան թաքավերոթունան։

Քյինամ ա թա չէ, տվրրածեն տղան հետան ա ընգյնում։ Քյինամ ա հղրցումը սպասում, էն վախտը, վեր օշափը կյամ ա, ուրան անա անց կենում, քմական փռնում ա, պրցրրցընում, հունց տափեն կյա՜մ, վեր տափը ճրղվում ա, ընգնում մաչը։

Տասսը օր ժամանակ տված ըն ինում, տասինչի օրը, վեր իրեքյնակը մար մեննելիս հասնի վեչ, ախպորը ուշուփնեն կախ ըն արվական։

Յոր ա օնում, ախճիգյը տանում։ Լհա՜ էն վախտրն ա հրսնում, վեր քյանդիրը քրցած թաքավերեն տրղեն պոկը, տաքրետկան տակեն, օղում ըն կախ տան։ Ախպորրն էլ ըզադում ա, ուշուփներեն էլ յոր օնում, քյինում ուրանց երգյիրը։

Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն անրմ։ Տվրրաժեն տղան էլ ըրժընանրմ ա թաքավերեն տղեն քրվորը, թաքավերեն ըխճրկանը, թաքավերեն տղան էլ հուրրփերի ըխճրկանը։

Երգյինքան իրեք խընձոր ա եր ընգնրմ. մինը՝ ըսողին, մինը՝ կարթացողին, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քրցողեն։